ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ «ԱԳԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԴԱՎԹԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԻՐԻՆԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ», «ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԱԿՈՒՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն կրթություն.

2)բավարարում է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին.

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2)ֆինանսատնտեսագիտական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4)աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5)ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6)առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը՝

1)ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2)ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3)ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարված կազմակերպության ղեկավար.

4)65 տարին լրացած քաղաքացիները.

5)ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար 26 մարտի 2020 թվականի N 02-Ն հրամանի» 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են:

Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանի 2-րդ կետի:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Թալինի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

1)դիմում
2)մեկ լուսանկար՝ 3Х4 չափսի.
3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4)նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիրը).
5)ինքնակենսագրություն
6)անձնագիր կամ նույնականացման քարտ
7)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ
8)արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները
9)տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
10)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Նշված բոլոր թափուր պաշտոնների աշխատավարձերը կազմում են՝ 140.000 ՀՀ դրամ ներառյալ հարկերը:
Կազմակերպությունների անվանումները համապատասխանում են գտնվելու վայրի բնակավայրերի անվանմանը:
-Մրցույթը անցկացվելու է 2026թ-ի հունվարի 30-ին ժամը 11:00-ին Թալինի համայնքապետարանի դահլիճում, (հասցեն՝ ք. Թալին, Գայի 1, 1-ին հարկ, հեռախոս՝ 060-75-77-85, էլեկտրոնային հասցե ՝ talinihamaynqapetaran@list.ru):
Մրցույթին մասնակցելու համար դիմումները ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10:00-17:00-ն, համայնքապետարանի աշխատակազմում (հասցեն՝ ք. Թալին Գայի փող. 1, 3-րդ հարկ, 310 սենյակ):
Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2026թ-ի հունվարի 16-ն է:

Թալինի համայնքապետարան